ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՊՊԱ ոլորտում ձևավորված առանձին տվյալների վերաբերյալ (ըստ ապահովագրական ընկերությունների և Բյուրոյի)

Հաշվետու ժամանակահատված՝ 2014թ հունվարի 1-ից 2014թ փետրվարի 28

Ընկերության անվանումը	Տ/Մ-ների քանակ, որոնց վերաբերյալ հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ առկա է գործող ԱՊՊԱ պայմանագիր	Հաշվեգրված ապ. վճարներ (հազ. դրամ)	Վերադարձված կամ վերադարձման ենթակա ապ. վճարներ (հազ. դրամ)	Հատուցում ստանալու համար ներկայացված դիմումների քանակ	Կարգավորված դիմումներ						ՉԱՊ-ի ընդհանուր գումարը հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ (հազ. դրամ)	ՏՉՊՊ-ի ընդհանուր գումարը հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ (հազ. դրամ)	ՆՉՊՊ-ի ընդհանուր գումարը հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ (հազ. դրամ)	Ապ. հատուցումների կարգավորման նպատակով կատարված ուղղակի ծախսեր (հազ. դրամ)
					Բավարարված և վճարված		Բավարարված, սակայն դեռևս չվճարված		Հատուցումից հրաժարվելու մասին դիմումների քանակ	Մերժված դիմումների քանակ				
					Քանակ	Ընդհանուր գումար (հազ. դրամ)	Քանակ	Ընդհանուր գումար (հազ. դրամ)						
«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ	35,890	396,321	9,578	755	726	111,988	44	9,029	2	8	690,822	38,803	153,138	1,661
«ԳԱՐԱՆՏ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ	1,164	0	76	104	198	42,946	25	9,433	0	1	5,930	27,156	14,348	124
«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ	85,313	1,263,928	31,121	1,706	1,739	302,862	12	12,131	31	16	1,655,847	111,280	227,500	1,707
«ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ	56,912	891,859	17,675	1,165	1,128	183,313	59	11,882	8	23	1,098,327	70,017	167,105	1,364
«ՌԵՍՈ» ԱՓԲԸ	62,085	713,752	25,111	1,332	1,071	205,249	127	21,226	3	13	1,053,821	86,966	248,293	11,523
«ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ	145,532	2,012,313	45,149	3,579	3,393	633,707	108	43,981	5	27	2,702,137	198,471	212,957	737
«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ	48,542	723,651	11,074	760	995	180,759	53	8,827	0	19	880,010	48,687	112,106	788
ԲՅՈՒՐՈ	-	-	-	45	36	22,878	10	3,973	1	2	-	-	94,702	656
ԸՆԴԱՄԵՆԸ	435,438	6,001,824	139,784	9,446	9,286	1,683,703	438	120,482	50	109	8,086,894	581,380	1,230,148	18,560

ԱՊՊԱ համակարգի ներգրավվածության ցուցանիշը

2014թ. փետրվարի 28-ի դրությամբ ԱՊՊԱ պայմանագիր ունեցող ավտոտրանսպորտային միջոցների քանակը կազմել է 435,438, ինչը նախորդ ամսվա վերջին օրվա դրությամբ ունեցած ցուցանիշի համեմատ աճել է 14,298-ով: Ներգրավվածության ցուցանիշի աճը հիմնականում կարող է պայմանավորված լինել ինչպես ՀՀ-ում տրանսպորտային միջոցների քանակի ավելացմամբ, այնպես էլ այն հանգամանքով, որ այժմ ԱՊՊԱ պայմանագիր ունենալու փաստը ստուգվում է էլեկտրոնային տարբերակով, ինչից ենթադրվում է, որ այն ապահովագիրները, որոնք նախկինում ԱՊՊԱ պայմանագիր չէին կնքում և ինչ-որ կերպ խուսափում էին տուգանքներից՝ այժմ սկսել են կնքել ԱՊՊԱ պայմանագիր և վարել իրենց մեքենան գործող ԱՊՊԱ պայմանագրով:



Հատուցումների ցուցանիշները

Փետրվար ամսվա ընթացքում բավարարված դիմումների գծով վճարված (վճարվելիք) հատուցումների ընդհանուր գումարը կազմել է մոտ 1 մլրդ դրամ: Փետրվար ամսվա ընթացքում կարգավորված դիմումների քանակը նախորդ ամսվա համեմատ աճել է՝ կազմելով 5,588 դիմում (2014 թվականի հունվար ամսվա ընթացքում կարգավորված դիմումների քանակը կազմել է 4,136): Փետրվար ամսվա դրությամբ հատուցման միջին չափը կազմել է 185,436 ՀՀ դրամ:

Վնասաբերության ցուցանիշը

Համակարգի վնասաբերության ցուցանիշը փետրվար ամսվա դրությամբ կազմել է մոտ 69.4%, ինչը նախորդ ամսվա նույն ցուցանիշի համեմատ փոքր է 9.7 տոկոսային կետով: Ինչպես և սպասվում էր, Բոնուս-Մալուս համակարգի ներդրումից հետո վարորդների վարքագիծը փոխվել է: Տվյալ գաղափարի մասին է վկայում ԱՊՊԱ համակարգի ներկայում առկա վնասաբերության ցուցանիշը:

Չնայած 2 ամսվա ունեցած տվյալները շատ քիչ են վերոնշյալ ենթադրությունները կատարելու համար՝ միջազգային փորձը ցույց է տալիս, որ Բոնուս-Մալուս համակարգի ներդրումից հետո վարքագծի փոփոխությունը գրեթե անխուսափելի է:

Այնուամենայնիվ համակարգի վնասաբերության, ինչպես նաև վարորդների վարքագծի փոփոխության ավելի հստակ պատկեր կունենանք միայն ամբողջ տարվա վիճակագրությունը

ունենալուց հետո, քանի որ վնասաբերության ցուցանիշը ամբողջ տարվա ընթացքում ենթարկվում է տատանումների, իսկ իր վերջնական և տրամաբանական տեսքին է գալիս միայն տարվա վերջում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ
ԲՅՈՒՐՈ